ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 մայիսի 2017 թվականի N 69-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիայի նախագահի 2017 թվականի մայիսի 17-ի N 0/36 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Գեղաշենի Ռ. Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Նաիրա Բաբայանին***՝ 2017 թվականի մայիսի 21-ից մինչև մայիսի 29-ը ներառյալ, ինը օրով գործուղել Չեխիայի Հանրապետություն՝ Պրահա քաղաքում կայանալիք *դպրոցականների ֆուտբոլի աշխարհի առաջնությանը*, որպես պատվիրակության ղեկավար մասնակցելու համար:

2. ***Նաիրա Բաբայանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Գեղաշենի Ռ. Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել՝ կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Ազնար Հարությունյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի մայիսի 19
ք. Հրազդան